

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կլիմայական

փոփոխություններին հարմարվողական պարենային
անվտանգության բարձրացման ծրագիր


Դրամաշնորհի պայմանագիր Թիվ 9241-ARM

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2024թ.-ի
հուլիսի 26-ից մինչև 2025թ.-ի դեկտեմբերի 31-ն
ընկած ժամանակահատվածի համար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Դրամական միջոցների հոսքերի և վճարումների մասին հաշվետվություն	6
Բյուջեի և փաստացի կատարողականի հաշվետվություն	7
Կանխավճարային հաշվի հաշվետվություն (ԱՄՆ դոլար)	8
Պետական համաֆինանսավորման հաշվի հաշվետվություն	9
Ծախսերի հայտարարագրերի հիման վրա միջոցների դուրսգրման ժամանակացույց	10
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ



ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը

Կարծիք

Մենք առաջիկայի ենք ենթարկել «Կլիմայական փոփոխություններին հարմարվողական պարենային անվտանգության բարձրացման ծրագրի» (այսուհետ՝ «CAFSEP») կամ «Ծրագիր» կից ներկայացված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները, որը ֆինանսավորվում է Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցներով՝ Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի (JFPR) միջոցով, և կառավարվում է Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) կողմից՝ թիվ 9241-ARM դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում: Այդ հաշվետվությունները ներառում են դրամական միջոցների հոսքերի և վճարումների մասին հաշվետվությունը, բյուջեի և փաստացի կատարողականի հաշվետվությունը, կանխավճարային հաշվի հաշվետվությունը, պետական համաֆինանսավորման հաշվի հաշվետվությունը, ծախսերի ամփոփ հաշվետվությունը, ինչպես նաև ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները 2024թ.-ի հուլիսի 26-ից մինչև 2025թ.-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար՝ ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփագիրը:

Մեր կարծիքով՝

- կից ներկայացված ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Կլիմայական փոփոխություններին հարմարվողական պարենային անվտանգության բարձրացման ծրագրի» դրամական հոսքերը 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված ժամանակահատվածի դրամական միջոցների ստացումներն ու վճարումները՝ համաձայն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՄՄ/IPSAS) «Հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդով ֆինանսական հաշվետվություններին ներկայացում» ստանդարտի, Ասիական զարգացման բանկի պահանջների և թիվ 9241-ARM դրամաշնորհի պայմանագրի դրույթների,
- ԱԶԲ-ի թիվ 9241-ARM դրամաշնորհի միջոցներն օգտագործվել են բացառապես Ծրագրի նպատակների համար և Դրամաշնորհի պայմանագրի դրույթներին համապատասխան,

- դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորված ծախսերը հիմնավորված են համապատասխան փաստաթղթերով և իրավասու են ֆինանսավորման՝ Դրամաշնորհի պայմանագրի համաձայն,
- Կանխավճարային հաշիվը պահպանվել և վարվել է Ասիական զարգացման բանկի պահանջներին և Դրամաշնորհի պայմանագրին համապատասխան, և
- Ծրագիրը բոլոր էական առումներով պահպանել է դրամաշնորհի պայմանագրի կիրառելի ֆինանսական սահմանափակումները (կովենանտները) և պահանջները.

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համաձայն: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից և Ծրագրի իրականացման թիմից (ԾԻԹ)՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի» (ներառյալ անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՄԽ կանոնագիրք), և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՀ էկոնոմիկայի նախարարության ԾԻԹ-ի ղեկավարությունը պատասխանատու է սույն ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների «Հաշվապահական հաշվառման դրամարկային մեթոդով ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի, թիվ 9241-ARM Դրամաշնորհի պայմանագրի դրույթների, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) պահանջների և ուղեցույցների, որը հանդես է գալիս որպես Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի (JFPR) կառավարիչ, և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է էական խեղաթյուրումներից (անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից) գերծ ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև ապահովելու, որ ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված և ԱԶԲ-ի կողմից կառավարվող Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի (JFPR) դրամաշնորհային միջոցներն օգտագործվեն բացառապես Դրամաշնորհի պայմանագրով նախատեսված նպատակներով, և որ Ծրագրի բոլոր ծախսերի համար պահպանվեն պատշաճ հիմնավորող փաստաթղթեր:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք այն մասին, թե արդյոք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ երաշխիքը բարձր մակարդակի երաշխիք է, սակայն այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային

ստանդարտների (ԱՄՄ-ներ) համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է:

Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, եթե առանձին-առանձին կամ միասին վերցրած, ողջամտորեն կարող է ակնկալվել, որ կազմեն օգտագործողների՝ սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Էկոնոմիկայի նախարարության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Գնահատում ենք, թե արդյոք Ծրագրի ծախսերն իրականացվել են իրավասու (նպատակային) նպատակներով և թիվ 9241-ARM Դրամաշնորհի պայմանագրի դրույթներին համապատասխան:
- Ուսումնասիրում ենք կանխավճարային հաշվի գործառնությունները և գնահատում, թե արդյոք դրամաշնորհի միջոցների օգտագործումը համապատասխանել է Ասիական զարգացման բանկի պահանջներին և Դրամաշնորհի պայմանագրին:
- Ձեռք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ Ծրագրի ֆինանսական տեղեկատվության և գործունեության վերաբերյալ՝ մեր կարծիքի արտահայտման համար հիմք ապահովելու նպատակով:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր

Գրիգոր Սարգսյան

29.06.2026

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ դոլար

Ծանոթ.	2024թ.-ի հունիսի 26- ից մինչև 2025 թ.-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար		2025թ.-ի դեկտեմբերի դրությամբ
Բանկային հաշիվների մնացորդը			
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	3	-	
ԱԶԲ-ի միջոցով ստացված JFPR			
դրամաշնորհային միջոցներ	4	420,806	420,806
Կառավարության համաֆինանսավորման ներդրումներ		67,995	67,995
Ընդամենը ֆինանսավորում		488,801	488,801
Կանխիկ վճարումներ			
JFPR դրամաշնորհի միջոցներից			
ֆինանսավորված ծրագրի ծախսեր		(348,292)	(348,292)
Կառավարության համաֆինանսավորման ներդրումներից ֆինանսավորված ծրագրի ծախսեր		(64,123)	(64,123)
Ընդամենը կանխիկ վճարումներ		(412,415)	(412,415)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ / (կորուստ)		(3,872)	(3,872)
Բանկային հաշիվների մնացորդը ժամանակաշրջանի ավարտի դրությամբ		72,514	72,514

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ-ի հունիսի 29-ին:

Արման Սարգսյան




Ծրագրի տնօրեն

29.06.2026



Շուշանիկ Գրիգորյան



Ծրագրի ֆինանսական ղեկավար

ԲՅՈՒՋԵՒ ԵՎ ՓԱՍՏԱՅԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ դոլար

	Հաստատված բյուջե	Փաստացի ծախսեր	Տարբերություն
ԱԶԲ / JFPR դրամաշնորհային ֆինանսավորում			
Դրամաշնորհի կատեգորիա			
Սարքավորումներ և նյութեր, խորհրդատվական և ոչ			
խորհրդատվական ծառայություններ	2,270,000	198,043	2,071,957
Ծրագրի կառավարում	460,000	150,249	309,751
Զբաղիված միջոցներ	270,000	-	270,000
Ընդամենը	3,000,000	348,292	2,651,708
Կառավարության կողմից ֆինանսավորում			
Հարկեր և տուրքեր	530,000	64,123	465,877
Ընդամենը Կառավարության կողմից ֆինանսավորման գումար	530,000	64,123	465,877
Ընդամենը Ծրագրի արժեք	3,530,000	412,415	3,117,585

Արման Սարգսյան




Ծրագրի տնօրեն

29.06.2026



Շուշանիկ Գրիգորյան



Ծրագրի ֆինանսական ղեկավար

ԿԱՆԽԱՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ դոլար

2024թ.-ի հուլիսի 26-ից

մինչև 2025թ.-ի

դեկտեմբերի 31-ը ընկած

ժամանակահատվածի

համար

Սկզբնական մնացորդը 26.07.2024թ.-ի դրությամբ

ԱԶԲ/ JFRP-ից ստացված սկզբնական կանխավճար

Համալրում թիվ 1

Համալրում թիվ 2

Համալրում թիվ 3

Համալրում թիվ 4

Ընդամենը մուտք

-

87,000

81,874

85,527

82,881

83,524

420,806

Հանած՝

Կանխավճարային հաշվից վճարված իրավասու ծախսեր

Ընդամենը ելք

Մնացորդը ժամանակաշրջանի վերջում

(348,292)

(348,292)

72,514

Արման Սարգսյան



Ծրագրի տնօրեն

29.06.2026



Շուշանիկ Գրիգորյան



Ծրագրի ֆինանսական ղեկավար

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

In USD

2024թ.-ի հուլիսի
26-ից մինչև
2025թ.-ի
դեկտեմբերի 31-ը
ընկած
ժամանակահատվածի համար

Մնացորդը 26.07.2024թ. դրությամբ

Գումարած՝

Կառավարության համաֆինանսավորման ներդրումներ

68,014

Վերադարձված պետական բյուջե

(19)

Ընդամենը գուտ մուտքեր

67,995

Հանած՝

Կառավարության համաֆինանսավորման ներդրումներից ֆինանսավորված
ծրագրի ծախսեր

(64,123)

Ընդամենը ելքեր

(64,123)

Փոխարժեքային տարբերություններից կորուստ

(3,872)

Մնացորդը ժամանակաշրջանի ավարտի դրությամբ

-

Արման Սարգսյան



Ծրագրի տնօրեն

29.06.2026



Շուշանիկ Գրիգորյան



Ծրագրի ֆինանսական ղեկավար

**ԾԱՆՍԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Դուրսգրում	Հոդված	ԱԶԲ %	Գումարը ԱՄՆ դոլարով
WA 00001	Սկզբնական կանխավճար	100	87,000
WA 00002	Խորհրդատվական ծառայություններ	100	22,257
	Ծրագրի կառավարման աջակցություն	100	59,616
WA 00003	Խորհրդատվական ծառայություններ	100	53,051
	Ծրագրի կառավարման աջակցություն	100	32,476
WA 00004	Խորհրդատվական ծառայություններ	100	61,110
	Ծրագրի կառավարման աջակցություն	100	21,771
WA 00005	Խորհրդատվական ծառայություններ	100	61,624
	Ծրագրի կառավարման աջակցություն	100	21,900
Ընդամենը			420,806

Արման Սարգսյան




Ծրագրի տնօրեն

29.06.2026



Շուշանիկ Գրիգորյան



Ծրագրի ֆինանսական ղեկավար

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Կլիմայական փոփոխություններին հարմարվողական պարենային անվտանգության բարձրացման ծրագրի» (այսուհետ՝ «Ծրագիր» կամ «CAFSEP») ֆինանսավորվում է Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցներով՝ Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի (JFPR) միջոցով, և կառավարվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից՝ 2024թ.-ի մայիսի 22-ի թիվ 9241-ARM Դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում:

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ «Ստացող») և Ասիական զարգացման բանկի միջև, որը հանդես է գալիս որպես JFPR-ի կառավարիչ: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2024թ.-ի հուլիսի 26-ին, և դրա փակումը նախատեսված է 2027թ.-ի հունիսի 30-ին:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ԾԻԹ-ի միջոցով, որը պատասխանատու է Ծրագրի գործունեության ամենօրյա կառավարման, ֆինանսական վարչարարության, գնումների, մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման համար:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,530,000 ԱՄՆ դոլար և ֆինանսավորվում է հետևյալ կերպ՝

Ֆինանսավորման աղբյուր

Գումարը (ԱՄՆ դոլար)

ԱԶԲ-ի կողմից կառավարվող JFPR դրամաշնորհ	3,000,000
Հայաստանի Կառավարության համաֆինանսավորում	530,000
Ծրագրի ընդհանուր արժեք	3,530,000

Ծրագրի նպատակն է բարձրացնել գյուղատնտեսական ապրուստի միջոցների դիմակայունությունը և բարելավել պարենային անվտանգությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության նկատմամբ խիստ խոցելի գյուղական վայրերում: Ծրագիրը կենտրոնանում է Հայաստանի Հանրապետության Ծիրակի և Տավուշի մարզերի ընտրված համայնքների վրա:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- Կլիմայի նկատմամբ դիմակայուն էներգետիկ լուծումների ներդրում և հետագա հզորացում,
- Պարենային անվտանգության համար կլիմայապես խելամիտ գյուղատնտեսական տեխնոլոգիաների բարելավում, և
- Կլիմայապես խելամիտ գյուղատնտեսական պլանավորման գծով էկոնոմիկայի նախարարության կարողությունների հզորացում:

JFPR Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող Ծրագրի ծախսերը ներառում են սարքավորումների և նյութերի, խորհրդատվական և ոչ խորհրդատվական ծառայությունների, ծրագրի կառավարման աջակցության հետ կապված ծախսերը, ինչպես նաև այլ իրավասու ծախսեր՝ համաձայն Դրամաշնորհի պայմանագրի և ԱԶԲ-ի կողմից հաստատված միջոցների բաշխման ու դուրսգրման վերանայված կարգավորումների:

Կառավարության համաֆինանսավորումը տրամադրվում է հիմնականում Ծրագրի գործունեությունից առաջացող հարկերի և տուրքերի, ինչպես նաև դրամաշնորհի պայմանագրին համապատասխան համաֆինանսավորման այլ իրավասու ծախսերի ծածկման համար:

Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ընդգրկում են 2024թ.-ի հուլիսի 26-ից (Ծրագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը) մինչև 2025թ.-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:

Ծրագիրը հիմնականում ֆինանսավորվում է հետևյալ կատեգորիաների միջոցով՝

Ֆինանսավորման աղբյուր / կատեգորիա		Նկարագրություն	Հաստատված բաշխում (ԱՄՆ դոլար)
JFPR Դրամաշնորհի ֆինանսավորում			
Կատեգորիա 1		Սարքավորումներ և նյութեր, խորհրդատվական և ոչ	
Կատեգորիա 2		խորհրդատվական ծառայություններ	2,270,000
Կատեգորիա 3		Ծրագրի կառավարման աջակցություն	460,000
Ընդամենը JFPR Դրամաշնորհի ֆինանսավորում		Զբաղիված միջոցներ	270,000
			3,000,000
Կառավարության համաֆինանսավորում		Հարկեր, տուրքեր և համաֆինանսավորման այլ իրավասու ծախսեր	530,000
Ծրագրի ընդհանուր արժեք			3,530,000

JFPR դրամաշնորհը ֆինանսավորում է իրավասու ծախսերը՝ առանց Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված հարկերի և տուրքերի, մինչդեռ Կառավարության համաֆինանսավորումը հիմնականում նախատեսված է Ծրագրի իրականացումից առաջացող հարկերի և տուրքերի ֆինանսավորման համար:

2 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականության

2.1 Պատրաստման հիմքերը

Այս Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ/IPSASB) կողմից թողարկված «Հաշվապահական հաշվառման դրամարկային մեթոդով ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՄ/IPSAS), թիվ 9241-ARM Դրամաշնորհային համաձայնագրի պահանջների և Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) համապատասխան ուղեցույցների համաձայն:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են բացառապես «Կլիմայական փոփոխություններին հարմարվողական պարենային անվտանգության բարձրացման ծրագրի» ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը ցույց տալու համար և նպատակ չունեն ներկայացնելու Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վիճակը կամ գործունեության արդյունքները:

Հաշվապահական հաշվառման դրամարկային մեթոդի համաձայն՝ ֆինանսավորումը ճանաչվում է ստացման պահին, այլ ոչ թե վաստակման, իսկ ծախսերը ճանաչվում են վճարման պահին, այլ ոչ թե կրման: Ըստ այդմ՝ Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում չեն ճանաչվում դեբիտորական պարտքերը, կրեդիտորական պարտքերը, հաշվեգրված եկամուտները, հաշվեգրված ծախսերը կամ այլ ակտիվներ ու պարտավորություններ, որոնք չեն մարվում դրամական գործարքների միջոցով:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ պահպանելու համար 2024թ.-ի մայիսի 22-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) միջև կնքված թիվ 9241-ARM Դրամաշնորհի պայմանագրի պահանջները, որտեղ ԱԶԲ-ն հանդես է գալիս որպես «Բարգավաճ և դիմակայուն Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ճապոնական հիմնադրամի» (JFPR) ադմինիստրատոր, ինչպես նաև ԱԶԲ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պահանջներն ու ուղեցույցները, ներառյալ՝ «Ծրագրերի ֆինանսական կառավարում և վերլուծություն» ուղեցույցը:

Այս Ծրագրի ֆինանսական հաշվետվություններով ընդգրկված հաշվետու ժամանակաշրջանն է 2024թ.-ի հուլիսի 26-ից մինչև 2025թ.-ի դեկտեմբերի 31-ը:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Ծրագրի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է, քանի որ Ծրագրի ֆինանսավորումը, բյուջետավորումը, միջոցների հատկացումը (վճարումները) և ֆինանսական հաշվետվությունները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Հայկական դրամով ստացված Կառավարության համաֆինանսավորման ներդրումները և այդ ներդրումների հաշվին իրականացված ծախսերը փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ կիրառելով համապատասխան գործարքների ամսաթվերին նախորդող օրվա դրությամբ գործող փոխարժեքները:

ՀՀ դրամով արտահայտված դրամական միջոցների մնացորդները փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ հաշվետու ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Արտարժույթի փոխարկումից առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են դրամական միջոցների ստացումների և վճարումների մասին հաշվետվությունում՝ դրանց առաջացման ժամանակաշրջանում:

2.3 Ֆինանսավորում

Դրամաշնորհի ֆինանսավորումը և Կառավարության համաֆինանսավորումը ճանաչվում են այն ժամանակ, երբ միջոցները մուտքագրվում են Հայաստանի Հանրապետության պետական գանձապետարանում բացված՝ Ծրագրի համապատասխան բանկային հաշիվներին:

Ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների հաշվառման դրամարկղային մեթոդով այն ժամանակաշրջանում, երբ տեղի են ունենում դրամական միջոցների համապատասխան ստացումները (մուտքերը):

2.4 Ծախսումներ

Ծրագրի ծախսերը ճանաչվում և ներառվում են Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակ, երբ վճարումներ են կատարվում իրավասու ապրանքների, աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների, ոչ խորհրդատվական ծառայությունների և Ծրագրի այլ գործողությունների համար՝ Դրամաշնորհի պայմանագրին համապատասխան:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական գանձապետարանում բացված՝ Ծրագրի կանխավճարային հաշվից և Կառավարության համաֆինանսավորման հաշվից:

Դրամական միջոցների հաշվառման դրամարկղային (կասային) մեթոդի համաձայն՝ ծախսերը ճանաչվում են վճարման պահին, այլ ոչ թե դրանց առաջացման (կրման) պահին:

3 Բանկային հաշիվներ

Ծրագրի հաշիվների մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հաշիվ	ԱՄՆ դոլարին համարժեք
Նախագծի կանխավճարային հաշիվ ԱՄՆ դոլարով (ADB/JFPR դրամաշնորհ)	72,514
Կառավարության համաֆինանսավորման հաշիվ ՀՀ դրամով	-
Ընդամենը	72,514

4 ԱԶԲ-ի հատկացումների և Ծրագրի հաշվառման տվյալների համադրում

2024թ.-ի հուլիսի 26-ից մինչև 2025թ.-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

Նկարագրություն	ԱՄՆ դոլարին համարժեք
ԱԶԲ-ի կողմից հատկացված գումար (Հաճախորդների պորտալ / Վարկային ֆինանսական տեղեկատվական համակարգ)	420,806

Գանձապետարանի / Բանկի կողմից մուտքագրված գումար	420,806
Ծրագրի հաշվապահական հաշվառման գրառումներում արտացոլված գումար	420,806
Տարբերություն	-

Մանրամասն համադրում

	ԱԶԲ հատկացումներ (ԱՄՆ դոլար)	Ստացված գումար (ԱՄՆ դոլար)	Տարբերություն
Դրամական միջոցների դուրսգրման հայտ			
Սկզբնական կանխավճար	87,000	87,000	-
Համալրում Թիվ 1	81,874	81,874	-
Համալրում Թիվ 2	85,527	85,527	-
Համալրում Թիվ 3	82,881	82,881	-
Համալրում Թիվ 4	83,524	83,524	-
Ընդամենը	420,806	420,806	-

5 Ծրագրի իրականացում

Ծրագիրն ուժի մեջ է մտել 2024թ.-ի հուլիսի 26-ին, և դրա փակումը նախատեսված է 2027թ.-ի հունիսի 30-ին:

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ծրագրի իրականացման գործողություններն ընթացքի մեջ էին: Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի իրականացումը կենտրոնացած է եղել հիմնականում ծրագրի մեկնարկային միջոցառումների, խորհրդատուների ներգրավման, տեխնիկական առաջադրանքների ու գնումների փաստաթղթերի պատրաստման և գնման գործընթացների մեկնարկի վրա: Ներդրումային բաղադրիչի շրջանակներում գնումների հիմնական փաթեթները հաշվետու ամսաթվի դրությամբ գտնվել են պատրաստման կամ գնման փուլում, և, հետևաբար, էական ծախսեր դեռևս չեն կատարվել: Այս շեղումը համապատասխանում է Ծրագրի իրականացման ժամանակացույցին և չի վկայում թերակատարման մասին:

Ծրագրի շրջանակներում իրականացված կուտակային փաստացի ծախսերը կազմել են 412,415 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 348,292 ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորված JFPR Դրամաշնորհի միջոցներից, և 64,123 ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորված Կառավարության համաֆինանսավորման ներդրումների հաշվին: Ծրագիրը դեռևս գտնվում է իրականացման առաջին փուլում, ուստի ֆինանսական առաջընթացը կազմում է 11.7%:

Ծրագրի իրականացման առաջընթացը վերահսկվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից և պարբերաբար զեկուցվում է Ասիական զարգացման բանկին Դրամաշնորհի պայմանագրի և Ծրագրի կառավարման ձեռնարկի համաձայն: